

Գլուխ VII

Մի անգամ Գ.-ի հետ զրուցելիս նրան հարցրեցի արդյոք հնարավոր էր համարում ձեռք բերել ոչ թե կարճատև «տիեզերական գիտակցություն», այլ առավել տևական: Ես «տիեզերական գիտակցություն» ասելով՝ հասկանում էի մարդուն հասանելի ամենաբարձր գիտակցությունը, որի մասին նախկինում գրել էի իմ «Տերտիում Օրգանում» գրքում:

- Ես չգիտեմ, թե ինչ նկատի ունեք՝ «տիեզերական գիտակցություն» ասելով, - պատասխանեց Գ.-ն, - դա շատ աղոտ և անորոշ եզրաբառ է: Ով, ինչպես ցանկանա, կարող է օգտագործել այն: Հաճախ «տիեզերական գիտակցություն» են անվանում երևակայությունը, զուգորդական անուրջները՝ կապված զգայական կենտրոնի ինտենսիվ աշխատանքի հետ: Երբեմն այն նմանվում է էքստազի, սակայն ավելի հաճախ դրանք երազների նման սուբյեկտիվ զգացմունքային ապրումներ են: Սակայն, այս ամենից զատ՝ մինչ «տիեզերական գիտակցության» մասին խոսելը, անհրաժեշտ է պարզել, թե *ինչ է գիտակցությունը* ընդհանրապես: Ինչպե՞ս էք սահամանում գիտակցությունը:

- Սովորաբար *գիտակցությունը* անսահմանելի է համարվում, - պատասխանեցի ես, - և իսկապես, ինչպե՞ս կարելի է սահամանել դա, եթե այն ներքին հատկանիշ է: Մեր դրամադրության տակ ունենալով հասարակ միջոցներ՝ մենք չենք կարող ապացուցել գիտակցության առկայությունը մեկ այլ մարդու մոտ: Մենք ճանաչում ենք այն միայն մեր ներսում:

- Այս ամենը դատարկաբանություն է, - ասեց Գ.-ն, - ընդունված գիտական սոփեստություն: Ժամանակն է դրանից ազատվել: Միայն մի բան է ճիշտ՝ այն, որ կարող ես միայն ինքդ քո գիտակցությունը *ճանաչել*: Ուշադրություն դարձրեք, ես ասում եմ *կարող եք ճանաչել*, քանզի կարող եք ճանաչել միայն այն դեպքում, եթե ունեք այն: Իսկ, եթե չունեք, ապա կարող եք իմանալ այդ մասին ոչ թե այս պահին, այլ ավելի ուշ: Այսինքն, երբ գիտակցությունը վերադառնա ձեզ մոտ, կսկսեք հասկանալ, որ այն երկար ժամանակ բացակայել է և կկարողանաք գտնել կամ վերհիշել այն պահը, երբ ձեր գիտակցությունը անհետացել է կամ կրկին ի հայտ եկել: Դուք կկարողանաք տարորոշել նաև այն պահերը, երբ համեմատաբար մոտ կամ ավելի հեռու եք գտնվել գիտակցությանը: Սակայն ուսումնասիրելով ձեր իսկ գիտակցության փայլատակումը և անհետանալը՝ դուք մի փաստ կարձանագրեք, որ ոչ գիտակցում եք, ոչ էլ ընդունում այս պահին. այդ փաստն այն է, որ գիտակցության պահերը շատ կարճատև են և տարանջատված միմյանցից մեքենայի կատարյալ անգիտակից մեխանիկական աշխատանքի երկար ընդմիջումներով: Դուք այդ ժամանակ կհասկանաք, որ կարող եք մտածել, զգալ, գործել, խոսել, աշխատել՝ *չգիտակցելով այդ ամենը*: Եվ, եթե սովորեք ձեր ներսում տարորոշել գիտակցության պահերը և մեխանիկականության երկար դադարները, ապա անկասկած ուրիշ մարդկանց մոտ կտեսնեք, թե երբ են նրանք գիտակցում իրենց գործողությունները և երբ չեն գիտակցում:

Ձեր հիմնական խնդիրն այն է, որ կարծում եք, թե *ձեր գիտակցությունը միշտ գործում է, որ այն մշտապես առկա է*, կամ *մշտապես բացակայում է*: Իրականում գիտակցությունն ունի անընդհատ փոփոխվելու հատկություն: Այն մի պահ կարող է

ներկա լինել, մյուս պահին՝ անհետանալ: Գոյություն ունեն գիտակցության տարբեր աստիճաններ ու մակարդակներ: Ինչպես գիտակցությունը, այնպես էլ գիտակցության տարբեր աստիճանները մարդն իր ներսում պետք է զգացումների, համի միջոցով ընկալի: Ոչ մի սահմանում չի կարող օգնել ձեզ այս դեպքում. այն նույնիսկ հնարավոր չէ այնքան ժամանակ, մինչև դուք ինքներդ չհասկանաք, թե *ինչ* էք ցանկանում սահմանել: Ոչ գիտությունը, ոչ էլ փիլիսոփայությունը չեն կարող սահմանել գիտակցությունը, քանի որ նրանք ցանկանում են սահմանել դա այնտեղ, որտեղ այն գոյություն չունի: Անհրաժեշտ է տարբերակել *գիտակցությունը գիտակցելու հնարավորությունից*: Մենք ունենք միայն գիտակցելու հնարավորություն և գիտակցության շատ հազվադեպ փայլատակումներ: Հետևաբար մենք չենք կարող սահմանել գիտակցություն հասկացությունը:

Ես չեմ կարող ասել, որ այն ամենն ինչ Գ.-ն ասեց գիտակցության մասին, ինձ համար անմիջապես հասկանալի էր: Մակայն դրան հետևող զրույցները բացատրեցին այն սկզբունքները, որոնց վրա հիմնված էին այս փաստարկները:

Մի անգամ հանդիպման սկզբում, Գ.-ն մի հարց հնչեցրեց, որին բոլորը հերթով պետք է պատասխանեին: Հարցը հետևյալն էր. «Ինքնադիտարկման գործընթացում ո՞րն է մեր կողմից նկատվող ամենագլխավոր երևույթը»:

Ներկաներից ոմանք պատասխանեցին, որ փորձելով ուսումնասիրել սեփական անձը, նրանք հատկապես նկատել են, որ չեն կարողանում կանգնեցնել մտքերի անդադար հոսքը: Մյուսներն ասեցին, որ դժվարությունների էին հանդիպել մի կենտրոնը մյուսից տարորոշելու ժամանակ: Ես ամբողջովին չէի հասկացել հարցը և միգուցե պատասխանս վերաբերում էր իմ սեփական խոհերին. ասեցի, որ իմ ուշադրությունը առավելապես գրավեց համակարգում փոխկապակցվածության գաղափարը, համակարգի ամբողջականությունը, որը կարծես մի «օրգանիզմ» լիներ, ինչպես նաև *իմանալ* բառի ամբողջովին նոր իմաստը, որն ենթադրում էր ոչ միայն այս կամ այն բանի մասին իմացություն, այլ դրա կապը ամեն ինչի հետ:

Ակնհայտ է, որ Գ.-ն դժգոհ մնաց մեր պատասխաններից: Ես արդեն սկսել էի հասկանալ նրան նման պարագաներում, քանի որ նա մեզանից ակնկալում էր հստակ ցուցումներ, որոնք մենք կամ բաց էինք թողել կամ էլ չէինք կարողացել հասկանալ:

- Ձեզնից ոչ մեկը չի նկատել ամենակարևոր հանգամանքը, որ ես ձեր ուշադրությանն արժանացրի, - ասեց նա: - Այսինքն՝ ձեզնից ոչ մեկը չի նկատել այն, որ *դուք ինքներդ ձեզ չեք հիշում*: (Նա յուրահատուկ կերպով շեշտադրեց այս բառերը): Դուք *ինքներդ ձեզ չեք* զգում, *ինքներդ ձեզ չեք* գիտակցում: Ձեզ մոտ «ինչ-որ մեկը դիտարկում է», այնպես ինչպես «խոսում է», «մտածում է», «ծիծաղում է»: Դուք չեք զգում՝ «ես դիտարկում եմ», «ես նկատում եմ», «ես տեսնում եմ»: Ամեն ինչ «նկատելի է», «տեսանելի է»... Իրականում սեփական անձն ուսումնասիրելու համար, առաջին հերթին՝ անհրաժեշտ է «*հիշել սեփական անձը*» (նա կրկին շեշտադրեց այս բառերը): Սեփական անձը դիտարկելիս՝ փորձեք հիշել ինքներդ ձեզ. ավելի ուշ կպատմեք ինձ ստացված արդյունքները: Միայն այն արդյունքները կունենան արժեք, որոնք կուղեկցվեն սեփական անձի հիշողությամբ: Այլապես դուք ինքներդ գոյություն չեք ունենա ձեր դիտարկումներում: Այդ դեպքում ի՞նչ արժեք կարող են ունենալ ձեր դիտարկումները:

Գ.-ի այս խոսքերը ինձ շատ մտածելու առիթ տվեցին: Ինձ անմիջապես թվաց, որ սա բանալին է այն ամենի, ինչ Գ.-ն ասել էր գիտակցության մասին: Մակայն, որոշեցի որևէ եզրակացություն չանել, այլ փորձել *ինքս ինձ հիշել*՝ սեփական անձս դիտարկելիս:

Հենց առաջին փորձերը ցույց տվեցին, թե որքան դժվար է դա անել: Սեփական անձը հիշելու փորձերը որևէ արդյունքներ չտվեցին, բացի նրանից, որ իրականում մենք ինքներս մեզ երբևիցե չենք հիշում:

- Էլ ի՞նչ է ձեզ պետք, - հարցրեց Գ.-ն: - Սա շատ կարևոր եզրահանգում է: Մարդիկ, ովքեր *գիտեն այդ մասին* (նա շեշտադրեց այս բառերը) արդեն իսկ շատ բան գիտեն: Ողջ խնդիրն այն է, որ ոչ ոք չգիտի այդ մասին: Եթե հարցնես մարդուն, արդյոք նա հիշում է իրեն, ապա նա կպատասխանի, որ կարող է: Եթե նրան ասես, որ չի կարող իրեն հիշել, նա կամ կզայրանա, կամ կմտածի, որ լրիվ ապուշ ես: Ողջ կյանքը, ողջ մարդկային գոյությունը, ողջ մարդկային կուրությունը հիմնված է սրա վրա: Եթե մարդն իսկապես գիտի, որ չի կարող իրեն հիշել, ապա մոտ է իր գոյությունը հասկանալուն:

Այն ամենն ինչ Գ.-ն էր ասում, այն ամենն ինչի մասին ես էի խորհել, և հատկապես այն ինչ իմ սեփական անձը հիշելու փորձերն էին ինձ ցույց տվել, շատ շուտով եկան ինձ համոզելու, որ իմ առջև այժմ ծառանում էր *ամբողջովին մի նոր խնդիր, որին գիտությունը և փիլիսոփայությունը մինչ այժմ չէին անդրադարձել*:

Մակայն նախքան որևէ եզրահանգում անելը, ես կփորցեմ նկարագրեմ սեփական անձս հիշելու իմ փորձերը:

Առաջին տպավորությունը, որ ստացա ինքս ինձ հիշելու կամ գիտակցելու փորձից՝ ասելով, որ ես քայլում եմ, ես անում եմ, անընդհատ զգալով այդ Ես-ը, *իմ մտքի արեգակումն էր*: Երբ ես զգում էի Ես-ը, ոչ կարողանում էի մտածել, ոչ էլ խոսել. նույնիսկ զգացումներն էին բթանում: Բացի այդ, ինքդ քեզ այսպերպ միայն շատ կարճ ժամանակով ես կարողանում հիշել: Նախկինում ես միտքը կանգնեցնելու փորձարկումներ էի կատարել, որոնք կարելի էր գտնել յոզայի պրակտիկային վերաբերող գրքերում: Օրինակ, նման նկարագրություն կա Էդուարդ Քարպենտերի «Ադամի գագաթից մինչև Էլեֆանտա» գրքում, չնայած, որ այն շատ ավելի ընդհանրական էր: Սեփական անձը հիշելու իմ առաջին փորձերը հիշեցրեցին ինձ հենց այդ իմ սկզբնական փորձարկումները: Իրականում դա հենց նույն բանն էր, սակայն կար մեկ տարբերություն, այն է՝ մտքերը դադարեցնելիս ուշադրությունն ամբողջովին ուղղված է մտքերն արգելելու ջանքերին, մինչդեռ սեփական անձը հիշելու պահին ուշադրությունն երկատվում է. դրա մի մասը ուղղվում է մտքի արգելակմանը, իսկ մյուս մասը՝ սեփական անձը զգալուն:

Գալով այս վերջին եզրահանգմանը՝ ես կարողացա տալ «սեփական անձը հիշելու»-ն որոշակի, գուցե ոչ ամբողջական, սահմանում, որն այնուամենայնիվ գործնականում շատ օգտակար գտնվեց:

Խոսքս երկատված ուշադրությանն է վերաբերում, ինչը սեփական անձը հիշելուն հատկանշական է:

Ես այն ինքս ինձ ներկայացրի հետևյալ կերպով.

Երբ որևէ բան եմ դիտարկում, իմ ուշադրությունն ուղղվում է դիտարկվող երևույթին, որը կարելի է պատկերել մի սլաքով:

Ես -----→ դիտարկվող երևույթը:

Երբ միևնույն ժամանակ ես փորձում եմ հիշել ինքս ինձ, իմ ուշադրությունն ուղղվում է դիտարկվող օբյեկտին/առարկային, ինչպես նաև դեպի ինձ: Գծի վրա երկրորդ սլաքն ենք ավելացնում այս դեպքում:

Ես ←-----→ դիտարկվող երևույթը:

Սահմանելով այս փաստը՝ ես հասկացա, թե որն է խնդիրը. ուղղելով ուշադրությունն ինքդ դեպի քեզ՝ դու չպետք է թուլացնես կամ վերացնես ուշադրությունդ, որն ուղղված է մեկ այլ երևույթի: Դեռ ավելին՝ «մեկ այլ երևույթը» կարող է ինչպես գտնվել ինչպես քո ներսում, այնպես էլ կամ քեզնից դուրս:

Ուշադրության նման բաժանման առաջին իմ փորձերը ցույց տվեցին, որ դա հնարավոր է անել: Միևնույն ժամանակ ես կարողացա շատ պարզ կերպով տեսնել երկու բան:

Առաջին հերթին՝ սեփական անձը հիշելու համար մեթոդի այս կիրառումը որևէ ընդհանրություն չունի «սեփական անձի զգացողության» կամ «սեփական անձի վերլուծության» հետ: Դա մի նոր և շատ հետաքրքիր վիճակ էր՝ տարօրինակ, բայց ծանոթ համով:

Երկրորդը՝ ես հասկացա, որ սեփական անձը հիշելու պահեր լինում են մեր կյանքում, սակայն շատ հազվադեպ: Նման պահերի միտումնավոր ստեղծումը առաջացնում է նորության զգացողություն: Իրականում ես դրանք զգացել եմ իմ վաղ մանկության ժամանակ: Դրանք առաջանում էին նոր և անսպասելի միջավայրերում, անձանոթ վայրում, ճամփորդության ժամանակ անձանոթ մարդկանց շրջապատում, երբ հանկարծ նայում ես շուրջդ և բացականչում. «Ինչ տարօրինակ է: Ես ինչպես հայտնվեցի այս վայրում»: Դա կարող է պատահել շատ զգացմունքային իրավիճակներում՝ վտանգի պահին, այն ժամանակ, երբ չպետք է գլուխդ կորցնես, երբ լսում ես սեփական ձայնդ, դրսից տեսնում ու դիտարկում ինքդ քեզ:

Ես շատ պարզ տեսա, որ կյանքիս առաջին հիշողությունները՝ կոնկրետ իմ պարագայում, *սեփական անձի հիշողության* պահերն էին: Վերջինս շատ բան բացահայտեց ինձ համար: Այսինքն՝ ես գիտակցեցի, որ հիշում եմ անցյալի միայն այն պահերը, որոնցում *հիշում եմ ինքս ինձ*: Մնացած ամենը՝ *զիտես, որ պարզապես տեղի են ունեցել*: Ես այդ հիշողություններն ամբողջովին վերականգնել չեմ կարող, որպեսզի կրկին վերապրեմ դրանք: Սակայն, այն պահերը, որոնցում ես հիշել էի ինքս ինձ կենդանի էին և չէին տարբերվում ներկայից: Ես դեռևս վախենում էի եզրակացություններ անել: Սակայն, արդեն տեսնում էի, որ կանգնած եմ շատ մեծ բացահայտման շեմին: Ինձ միշտ ապշեցրել է մեր հիշողության թուլությունը, անբավականաչափությունը և այն, թե որքան բան է կորչում այնտեղից: Այսպես, թե այնպես, կյանքի գլխավոր անհեթեթությունը կայանում է հենց հետևյալ հարցում՝ ինչու՞ են պետք այս բոլոր ապրումները, եթե մենք պետք է մոռանանք դրանք: Դեռ ավելին՝ ինչ-որ ստորացուցիչ մի բան կար դրանում: Մարդը զգում է մի բան, որ նրա համար շատ կարևոր է թվում և ենթադրում է, թե երբևիցե չի մոռանա այն: Մեկ կամ երկու տարի անց դրանից ոչինչ չի մնում: Այժմ ինձ համար պարզ էր դարձել, թե

ինչու է դա այդպես և ինչու այլ կերպ չէր էլ կարող լինել: Եթե մեր հիշողությունը կենդանի է պահում միայն սեփական անձը հիշելու պահերը, ապա պարզ է դառնում, թե ինչու է մեր հիշողությունն այդքան թույլ:

Այդ ամենը առաջին օրերի եզրահանգումներն էին: Ավելի ուշ, երբ սկսեցի սովորել, թե ինչպես տարանջատել ուշադրությունը, նկատեցի, որ սեփական անձի հիշողությունը հիանալի զգացողություն է հաղորդում, ինչը բնականից, ինքնաբերաբար մեզ մոտ ի հայտ է գալիս շատ բացառիկ պայմաններում: Այսպիսով, օրինակ՝ ես ժամանակին շատ էի սիրում գիշերով դեգերել Պետերբուրգում և «զգալ» տները և փոխոցները: Պետերբուրգը լի է նման տարօրինակ զգացողություններով: Տները՝ հատկապես հին տները, բավականին կենդանի էին, ես պարզապես չկարողացա նրանց հետ խոսել: Որևէ «երևակայություն» չկար դրանում: Ես որևէ բան չէի մտածում. պարզապես քայլում էի՝ փորձելով ինքս ինձ հիշել և շուրջս նայել. զգացողությունները եկան ինքնաբերաբար:

Ավելի ուշ ես շատ անսպասելի բաներ էի բացահայտելու նույն ճանապարհով: Սակայն այդ մասին ես հետո կխոսեմ:

Երբեմն սեփական անձը հիշելը չէր հաջողվում, երբեմն էլ դրան ուղեկցում էին հետաքրքրաշարժ դիտարկումներ:

Մի անգամ, ես Լիտեյնիով քայլում էի դեպի Նևսկի, և չնայած բոլոր իմ ջանքերին՝ ինձ չէր հաջողվում ուշադրությունս սևեռել սեփական անձի հիշողության վրա:

Աղմուկը, շարժումները, ամեն ինչ շեղում էր ինձ: Ամեն բույս ես կորցնում էի իմ ուշադրության թելը, գտնում էի այն և կրկին կորցնում: Վերջապես ես մի տեսակ ծիծաղաշարժ բորբոքվածություն զգացի և թեքվեցի ձախ կողմում ընկած փողոց՝ վճռելով ուշադրությունս սևեռել այն փաստի վրա, որ *ես պետք է, գոնե որոշ ժամանակով, հիշեմ սեփական անձս*, մինչև մյուս փողոց հասնելը: Ես հասա Նադեժդանսկայա՝ չկորցնելով ուշադրությանս թելը, միգուցե բաց թողնելով այն մի քանի ակնթարթ: Այնուհետև կրկին անցա դեպի Նևսկի՝ գիտակցելով, որ հանգիստ փողոցներում ինձ համար ավելի հեշտ կլինեի պահպանել մտքիս թելը. այդ իսկ պատճառով, ես ցանկանում էի ինքս ինձ փորձել առավել աղմկոտ փողոցներում: Հիշելով ինքս ինձ՝ Հասա Նևսկի. ներքին խաղախության և վստահության տարօրինակ զգացում ունեի, որը սովորաբար այցելում է մեզ՝ նման հսկայական ջանքեր գործադրելուց հետո: Նևսկու անկյունում մի ծխախոտի կրպակ կար, որտեղ պատրաստում էին իմ ծխախոտները: Շարունակելով հիշել սեփական անձս՝ որոշեցի մտնել և ծխախոտ պատվիրել:

Երկու ժամ անց *ես զարթնեցի* Տավրիչեսկայայում, այսինքն՝ բավականին հեռու: Կառքով գնում էի տպարան: Զարթոնքի զգացողությունը արտասովոր կերպով վառ էր: Կարող եմ գրեթե վստահությամբ ասել, որ *սթափվեցի*: Ամեն ինչ միանգամից հիշեցի. թե ինչպես էի շրջում Նադեժդինսկայա փոխոցով, ինչպես էի փորցում ինքս ինձ հիշել, ինչպես մտքովս անցան ծխախոտները և ինչպես այս մտքից, կարծես, անմիջապես, խորը քնի մեջ սուզվեցի:

Խորասուզվելով քնի մեջ՝ ես միաժամանակ շարունակում էի կանոնավոր և նպատակահարմար գործողություններ կատարել: Դուրս գալով ծխախոտի կրպակից՝ մտա Լիտեյնիի վրա գտնվող իմ բնակարանը և զանգահարեցի տպարան:

Գրեցի երկու նամակ: Այնուհետև դուրս եկա տնից: Քայլեցի Նևսկու ձախ կողմով մինչև Գոստինի Դվոռ՝ մտադրվելով գնալ դեպի Օֆիցերսկայա: Այնուհետև մտափոխվեցի, քանի որ ուշ էր: Նստեցի կառքը և ուղևորվեցի դեպի Կավալերգրադսկայա, որտեղ տպարանն էր գտնվում: Եվ ճանապարհին՝ անցնելով Տավրիչեսկայա փողոցով սկսեցի արտասովոր անհանգստություն զգալ, կարծես, ինչ-որ բան մոռացած լինեի: *Հանկարծ հիշեցի, որ մոռացել եմ հիշել ինքս ինձ:*

Իմ դիտարկումները և եզրահանգումները ես պատմեցի մեր խմբի մարդկանց, ինչպես նաև տարբեր գրականագետ ընկերներիս և շատ ուրիշ մարդկանց:

Ասացի նրանց, որ դա ողջ համակարգի և սեփական անձի վրա աշխատելու ծանրության կենտրոնն էր, որ այժմ սեփական անձի վրա տարվող աշխատանքը դատարկ խոսքեր չէին, այլ լիիմաստ փաստ, որի շնորհիվ հոգեբանությունը դառնում էր ճշգրիտ և միևնույն ժամանակ գործնական գիտություն:

Ես ասեցի, որ եվրոպական և արևմտյան հոգեբանությունը ընդհանրապես հույժ կարևոր մի փաստ են բաց թողել, այն է՝ *որ մենք ինքներս մեզ չենք հիշում*, որ ապրում, գործում և խորհում ենք խորը քնի մեջ. ոչ, սա փոխաբերություն չէ, այլ բացարձակ իրականություն: Բաց է թողվել նաև այն փաստը, որ եթե բավարար ջանքեր գործադրենք, ապա *կարող ենք արթնանալ:*

Ապշած էի, թե որքան էին տարբերվում մեր խմբի և մեր խմբից դուրս մարդկանց ընկալումները: Այն մարդիկ, ովքեր պատկանում էին մեր խմբին հասկացել էին, իհարկե ոչ միանգամից, որ մենք «հրաշքի» հետ էինք բախվել. սա մի «նոր» երևույթ էր, որը նախկինում որևէ տեղ չի գտել:

Մյուսները այս ամենը չէին հասկանում: Դրան շատ թեթև մոտեցան և սկսեցին նույնիսկ ինձ ապացուցել, որ նման տեսություններ նախկինում գոյություն ունեցել են:

Ա.Լ.Վոլինսկին, ում ես հաճախ հանդիպում էի և ում հետ զրույցներ էի վարում 1909թ-ից ի վեր և ում կարծիքը ես շատ գնահատում էի, «սեփական անձի հիշողության» գաղափարի մեջ որևէ նոր բան չտեսավ:

- Դա *ապերցեպցիա* է, - նա ինձ ասեց: - Կարդացե՛լ ես Վունդթի «Տրամաբանությունը»: Այնտեղ դու կգտնես ապերցեպցիայի նրա վերջին սահմանումը: Դա հենց այն է, ինչի մասին, որ դու խոսում ես: «Հասարակ դիտարկումը» ըմբռնողությունն է: «Դիտարկումը սեփական անձի հիշողությամբ», ինչպես դու ես այն կոչում, ապերցեպցիա է: Իհարկե Վունդթը գիտեր այդ մասին:

Զցանկացա վիճել Վոլինսկու հետ: Ես կարդացել էի Վունդթ: Եվ իհարկե Վունդթի գրածը այն չէր, ինչի մասին ես էի խոսում: Վունդթը մոտեցել էր այդ գաղափարին, մյուսները նույնպես նույնքան մոտ էին, սակայն մոտենալով այդ կետին՝ հետագայում նրանք շեղվել էին ուղղությունից: Նա չհասկացավ իր մտքերի ետևում թաքնված *ըմբռնման* տարբեր ձևերի վերաբերյալ գաղափարի կարևորությունը: Եվ չնկատելով այդ ամենը՝ նա իհարկե չէր կարող հասկանալ այն, որ գիտակցության բացակայությունը և գիտակցության կամավոր առաջ բերելը մեր մտածողության մեջ կենտրոնական դիրք է գրավում: Տարօինակ էր, սակայն, որ Վոլինսկին չհասկացավ դա նույնիսկ այն ժամանակ, երբ *ես այն մատնանշեցի:*

Ես ավելի ուշ համոզվեցի, որ այս գաղափարը անթափանց շղարշով էր պատված, նույնիսկ շատ բարեկիրթ մարդկանց համար, իսկ ավելի ուշ նույնիսկ հասկացա, թե *ինչու*:

Մոկսվայից վերդառնալուն պես՝ Գ.-ն մեզ գտավ սեփական անձը հիշելու փորձեր կատարելիս և այդ փորձարկումների մասին քննարկումներ վարելիս: Սակայն իր առաջին դասախոսության ժամանակ նա մեկ այլ թեմայից խոսեց:

- Ճշգրիտ գիտելիքներում մարդու ուսումնասիրությունը պետք է զուգորդվի աշխարհի ուսումնասիրությամբ: Իսկ աշխարհի ուսումնասիրությունը պետք է զուգորդվի մարդու ուսումնասիրությամբ: Օրենքներն ամենուր նույնն են, ինչպես աշխարհում, այնպես էլ մարդու մոտ:

Յուրացնելով ցանկացած օրենքի սկզբունքները՝ մենք պետք է դրա դրսևորման ձևերը փնտրենք ինչպես աշխարհում, այնպես էլ մարդու մոտ: Դեռ ավելին՝ որոշ օրենքներ ավելի հեշտությամբ են դիտարկվում աշխարհում, մյուսները՝ մարդու մոտ: Այդ պատճառով էլ որոշ դեպքերում ավելի լավ է սկսել աշխարհից, այնուհետև անցնել մարդուն, իսկ այլ դեպքերում ավելի լավ է սկսել մարդուց, այնուհետև անցնել աշխարհին:

Աշխարհի և մարդու զուգահեռ ուսումնասիրությունները հետազոտողին ցույց կտան բոլոր երևույթների հիմնարար միասնությունը և կօգնեն նրան նմանություններ գտնել տարբեր դասերին պատկանող երևույթներում:

Հիմնական օրենքների թիվը, որոնք ղեկավարում են բոլոր գործընթացները ինչպես աշխարհում, այնպես էլ մարդկանց մոտ, շատ փոքր է: Մի քանի տարրական ուժերի տարբեր թվային համադրումներ ստեղծում են բոլոր թվացյալ երևույթները:

Տիեզերքի մեխանիկան հասկանալու համար անհրաժեշտ է բարդ երևույթները բաշխել տարրական ուժերի:

Տիեզերքի հիմնական օրենքը երեք ուժերի կամ երեք սզբունքների օրենքն է, կամ ինչպես շատ հաճախ ընդունված է այն կոչել՝ *երեքի օրենքը*: Այս օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր երևույթ բոլոր աշխարհներում առանց որևէ բացառության երեք ուժերի՝ բացասական, դրական և չեզոք, զուգահեռ գործունեության արդյունք է: Սա մենք արդեն քննարկել ենք և հետագայում՝ ուսումնասիրության յուրաքանչյուր փուլում, նույնպես կանդրադառնանք այս օրենքին:

Տիեզերքի հաջորդ հիմնական օրենքը *յոթի օրենքն է կամ օկտավաների օրենքը*:

Այս օրենքի նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել տիեզերքը որպես *տատանումների բաղադրություն*: Այս տատանումները տեղի են ունենում տիեզերքը կազմող նյութեղենում, որը կարող է լինել տարբեր խտության՝ շատ նուրբ կամ շատ կոպիտ: Նրանք սկզբի են առնում տարբեր աղբյուրներից և ընթանում են տարբեր ուղղություններով՝ խաչվելով, բախվելով մեկը մյուսի հետ, ամրանալով, թուլանալով, խոչընդոտելով միմյանց և այլն:

Այս կապակցությամբ կարելի է նշել, որ արևմուտքի կողմից ընդունված տեսակետի համաձայն՝ տատանումները շարունակական են: Սա նշանակում է, որ սովորաբար տատանումները դիտարկվում են որպես անխոչընդոտ վերընթաց և

վարընթաց մի ընթացք, որ զարգանում է այնքան ժամանակ, որքան գործում է տատանումներն առաջացրած սկզբնական իմպուլսային ուժը՝ հաղթահարելով այն միջավայրի հակազդեցությունը, որում տեղի են ունենում տվյալ տատանումները: Երբ իմպուլսային ուժը սպառվում է և միջավայրի հակազդեցությունը առաջ է մղվում/գերակշռում է, տատանումները բնականաբար մարում են և դադարում: Սակայն մինչ այդ պահը, այսինքն՝ մինչ բնական թուլացման պահը, տատանումները համաչափորեն և աստիճանաբար զարգանում են, իսկ հակազդեցության բացակայության պայմաններում նույնիսկ կարող են դառնալ անվերջ: Այսպիսով, ֆիզիկայի դրույթներից մեկը *տատանումների շարունակականությունն է*, չնայած, որ այն հստակորեն ձևակերպված չի, քանի որ երբևիցե կասկածի չի ենթարկվել: Նորագույն տեսություններից մի քանիսում այս դրույթը հաստատուն չէ: Այնուամենայնիվ, ֆիզիկան շատ հեռու է տատանումների բնույթի վերաբերյալ ճշգրիտ հայեցակետ հայտնելուց կամ իրական աշխարհում տատանումների ընկալման պատշաճ պատկերացումներից:

Այս դեպքում հնագույն գիտելիքների հայեցակետը հակադրվում է ժամանակակից գիտությանը, քանի որ տատանումների ընկալման հիմքում հնագույն գիտելիքները տեսնում են *տատանումների շարունակականության բացակայությունը*:

Տատանումների շարունակականության բացակայության սկզբունքը արտահայտում է բնության մեջ բոլոր տատանումների որոշակի և անհրաժեշտ հատկությունները, լինեն դրանք վերընթաց, թե վարընթաց. դրանք զարգանում են ոչ թե համաչափորեն, այլ պարբերական արագացումներով կամ դանդաղեցումներով: Այս սկզբունքը կարելի է ավելի հստակ ձևակերպել, եթե ասենք, որ տատանումներում սկզբնական իմպուլսային ուժը համաչափ չի, այլ, կարծես, պարբերական՝ մեկ ուժեղանում է, մեկ թուլանում: Իմպուլսային ուժը գործում է՝ չփոխելով իր բույթը, իսկ տատանումները համաչափ են զարգանում միայն որոշ ժամանակամիջոցում, ինչը պայամանավորված է իմպուլսի բնույթով, միջավայրով, պայամաններով և այլնով: Սակայն որոշակի պահի տվյալ գործընթացում տեղի է ունենում որոշակի փոփոխություն, և տատանումները, ասյպես ասած, դադարում են ենթարկվել, կարճ ժամանակով հապաղում են և որոշ չափով փոխում իրենց բույթը և ուղղությունը: Օրինակ՝ վերընթաց տատանումները որոշակի պահի սկսում են ավելի դանդաղ բարձրանալ, իսկ վարընթաց տատանումները սկսում են ավելի դանդաղ վար ընթանալ: Այս ժամանակավոր հապաղումից հետո, ինչպես վերընթաց այնպես էլ վարընթաց շարժման դեպքում, տատանումները կրկին հունի մեջ են ընկնում և որոշ ժամանակ համաչափորեն իջնում և բարձրանում են մինչ այն պահը, երբ նրանց զարգացման մեջ կրկին դադար է տեղի ունենում: Այս կապակցությամբ նշանակալից է այն, որ համաչափ գործողությունների շրջանները հավասարաչափ չեն, ոչ էլ հապաղումներն են սիմետրիկ: Մի ժամանակահատված ավելի կարճատև է, մյուսը՝ ավելի երկարատև:

Հապաղման այս պահերը տարբորոշելու համար, այսինքն՝ տատանումների վերընթաց և վարընթաց պահերը սահմանելու համար, տատանումների զարգացման գծերը բաժանվում են ժամանակահատվածների, որոնք

համապատասխանում են տվյալ ժամակահատվածում տատանումների քանակի կրկնապատկմանը կամ կիսով չափ կրճատմանը:

Եկեք պատկերացնենք աճող տատանումների մի գիծ: Վերցնենք նրանց այն պահին, որի ժամանակ նրանք տատանվում են մեկ վայրկյանում հազար անգամ: Որոշ ժամանակ անց տատանումների քանակը կրկնապատկվում է, որը հասնում է երկու հազարի:



Պատկեր 7

Բացահայտվել և սահմանվել է, որ տատանումների ընդմիջման ժամանակ՝ տվյալ տատանումների քանակի և դրանց կրկնապատկման ժամանակամիջոցում, գոյություն ունի երկու տեղ, որտեղ տեղի է ունենում *տատանումների աճի հասպադում*: Մեկը մոտ է սկզբին, սակայն ոչ ամենասկզբում: Մյուսը տեղի է ունենում գրեթե վերջում: Մոտավորապես այսպես՝



Պատկեր 8

Այն օրենքները որոնցով առաջնորդվում են տատանումների հասպադումը կամ բեկումը իրենց սզբնական ուղղությունից, հայտնի էին հնադարյան գիտությանը: Այս օրենքները պահպանվել են մինչ օրս և յուրահատուկ բանաձևի կամ գծապատկերի տեսք են ընդունել: Այս բանաձևում այն ժամանակահատվածները, որոնցում տատանումները կրկնապատկվում են, ըստ տատանումների հաճախականության աճի, բաժանվում են *ուրթ* անհավասար աստիճանների: Ուրթերորդ աստիճանը կրկնում է առաջինին, սակայն կրկնակի տատանումներով: Տվյալ թվի և կրկնապատկվող թվի միջև ընկած տատանումների կրկնապատկման ժամանակահատվածը կոչվում է օկտավա, այսինքն՝ ուրթից բաղկացած:

Այն սկզբունքը, ըստ որի կրկնապատկող ժամանակահատվածը բաժանվում է ուրթ անհավասարաչափ հատվածների, հիմնված է ամբողջ օկտավայում տատանումների անհամաչափ աճի դիտարկումների վրա. օկտավայի առանձին «աստիճանները» իրենց զարգացման տարբեր փուլերում արագանում կամ դանդաղում են:

Այս բանաձևի տեսքով օկտավայի մասին գաղափարները դպրոցից դպրոց փոխանցվել են ուսուցչից աշակերտին: Հնագույն ժամանակներում դպրոցներից մեկը հասկացել է, որ այս բանաձևը կարելի է կիրառել երաժշտության մեջ: Այսպիսով, ձևավորվում է յոթ հնչյուն երաժշտական գամման, որը հայտնի էր ամենահեռավոր ժամանակներում, սակայն երբեմն մոռացության էր տրվում, իսկ այնուհետև կրկին «բացահայտվում»:

Յոթ հնչյուն գամման տիեզերական օրենքի բանաձևն է, որը մշակվել է հնագույն դպրոցների կողմից և կիրառվել երաժշտության մեջ: Մնչդեռ, եթե մենք ուսումնասիրենք օկտավաների օրենքների դրսևորումները այլ տեսակի տատանումներում, ապա կտեսնենք, որ օրենքներն ամենուր նույնն են. լուսային, ջերմային, քիմիական, մագնիսական և այլ տատանումները ենթարկվում են այն միևնույն օրենքներին, որոնց ենթարկվում են ձայնային օրենքները: Օրինակ՝ ֆիզիկայում հայտնի է լուսային գամման, քիմիայում՝ տարրերի պարբերական համակարգը, որ անկասկած սերտորեն կապված է օկտավաների սկզբունքի հետ, չնայած՝ այս կապը դեռևս ամբողջովին պարզ չէ գիտության համար:

Յոթ հնչյուն երաժշտական գամմայի ուսումնասիրությունը շատ լավ հիմք է հանդիսանում՝ օկտավաների տիեզերական օրենքը հասկանալու համար:

Եկեք նորից վերցնենք վերընթաց օկտավան, այսինքն՝ օկտավան, որտեղ տատանումների հաճախականությունը մեծանում է: Եկեք պատկերացնենք, որ այս օկտավան սկսվում է վայրկյանում հազար տատանումներ կատարելով: Եկեք այս հազար տատանումները նշանակենք *ηη* նոտայով: Տատանումները աճում են, այսինքն՝ նրանց հաճախականությունը մեծանում է: Այն ժամանակ, երբ նրանք հասնեն վայրկյանում երկու հազար տատանումների, կստանանք երկրորդ «դոն», այսինքն՝ հաջորդ օկտավայի «դոն»:

դո-----դո

Պատկեր 9

Առաջին և երկրորդ «դո»-ի միջև եղած հատվածը, այսինքն՝ օկտավան, բաժանվում է յոթ *անհավասար* մասերի, քանի որ տատանումների հաճախականության աճը համաչափ չէ:

դո ռե մի ֆա սոլ լյա սի դո
 |-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|

Պատկեր 10

Նոտաների բարձրության հարաբերակցությունը կամ տատանումների հաճախականությունը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով. եթե դիտարկենք «դո»-ն որպես 1, ապա «ռե»-ն կլինի $9/8$, «մի»-ն՝ $5/4$, «ֆա»-ն՝ $4/3$, «սոլ»-ը՝ $3/2$, «լյա»-ն՝ $5/3$, «սի»-ն $15/8$, «դո»-ն՝ 2:

1	9/8	5/4	4/3	3/2	5/3	15/8	2
դո	ռե	մի	ֆա	սոլ	լյա	սի	դո

Պատկեր 11

Արագության, նոտաների աճի փոփոխությունը կամ հնչյունային տարբերությունը կարելի է պատկերել հետևյալ կերպով՝

- «Դո»-ի և «ռե»-ի միջև $9/8 : 1 = 9/8$
- «Ռե»-ի և «մի»-ի միջև $5/4 : 9/8 = 10/9$
- «Մի»-ի և «ֆա»-ի միջև $4/3 : 5/4 = 16/15$ աճը հապաղում է
- «Ֆա»-ի և «սոլ»-ի միջև $3/2 : 4/3 = 9/8$
- «Սոլ»-ի և «լյա»-ի միջև $5/3 : 3/2 = 10/9$
- «Լյա»-ի և «սի»-ի միջև $15/8 : 5/3 = 9/8$
- «Սի»-ի և «դո»-ի միջև $2 : 15/8 = 16/15$ աճը կրկին հապաղում է

Նոտաների կամ դրանց բարձրության միջև եղած տարբերությունները կոչվում են *ինտերվալներ*: Մենք կտեսնենք, որ օկտավայում գոյություն ունեն երեք տեսակի ինտերվալներ՝ $9/8$, $10/9$ և $16/15$, որոնք համապատասխանում են 405, 400 և 384 ամբողջական թվերին: Ամենափոքր ինտերվալը՝ $16/15$ գտնվում է «մի»-ի և «ֆա»-ի, «սի»-ի և «դո»-ի միջև: Հենց այստեղ է տեղի ունենում օկտավայի դանդաղեցումը: Երաժշտական (յոթ հնչյուն) գամմայում սովորաբար (տեսականորեն) ընդունված է համարել, որ յուրաքանչյուր հնչյունի միջև գոյություն ունի կիսահնչյուն, բացառությամբ «մի-ֆա» և «սի-դո» ինտերվալների, որոնք բաղկացած են մեկ կիսահնչյունից և որտեղ դուրս է մղված մյուս կիսահնչյունը:

Այսկերպ ձևավորվում է *քսան* նոտա, որոնցից ութը հիմնական են՝

դո, ռե, մի, ֆա, սոլ, լյա, սի, դո

և տանսերկու միջակա. երկուսը՝ հետևյալ երկու նոտաներից յուրաքանչյուրի միջև՝

- դո-ռե
- ռե-մի
- ֆա-սոլ
- սոլ-լյա
- լյա-սի

և մեկը՝ երկու հետևյալ նոտաներից յուրաքանչյուրի միջև.

- մի-ֆա
- սի-դո

Մակայն գործնականում, այսինքն՝ երաժշտության մեջ տասներկու միջակա կիսահնչյունների փոխարեն միայն հինգն է վերցվում, այն է՝ մեկ կիսահնչյուն հետևյալ նոտաների միջև.

- դո-ռե

ռե-մի
ֆա-սոլ
սոլ-լյա
լյա –սի


«Մի»-ի և «ֆա»-ի, ինչպես նաև սիի և դոյի միջև կիսահնչյուն ընդհանրապես չկա:

Այսկերպ երաժշտական յոթ հնչյուն պարունակող գամմայի կառուցվածքը պատկերացում է տալիս տիեզերական օրենքի «ինտերվալների» կամ բացակայող կիսահնչյունների համակարգի մասին: Երբ «տիեզերական» կամ «մեխանիկական» տեսանկյունից են դիտարկվում օկտավաները, միայն «մի»-ի և «ֆա»-ի, ինչպես նաև «սի»-ի և «դո»-ի միջև եղած ինտերվալներն են կոչվում *«ինտերվալներ»*:

Եթե մենք ըմբռնենք դրա ամբողջական իմաստը, օկտավաների օրենքը լիովին նոր մեկնաբանություն կտա ողջ կյանքին, ինչպես նաև բոլոր մակարդակներում մեր կողմից դիտարկվող տիեզերական երևույթների զարգացմանը: Այս օրենքը բացատրում է, թե ինչու բնության մեջ գոյություն չունեն ուղիղ գծեր, ինչու մենք ունակ չենք ոչ մտածելու, ոչ անելու, ինչու է մեր դեպքում ամեն ինչ *մտածված*, ինչու է ամեն բան *պատահում* և պատահում է սովորաբար մեր ցանկություններին և ակնկալիքներին հակառակ: Այս ամենը «ինտերվալների» կամ տատանումների զարգացման մեջ դանդաղեցումների ակնհայտ և անմիջական արդյունք է:

Ի՞նչ է կոնկրետ տեղի ունենում տատանումների դանդաղեցման ժամանակ: Սկզբնական ողողության շեղում է տեղի ունենում: Օկտավան սկսվում է սլաքի ուղողությամբ՝

դո ռե մի



Պատկեր 12

սակայն «մի»-ի և «ֆա»-ի միջև շեղում է տեղի ունենում. «դո»-ից սկիզբ առնող գիծը փոխում է իր ուղղությունը՝

Պատկեր 13

և «ֆա», «սոլ», «լյա» և «սի» նոտաների կորագծով այն սկսում է «դո», «ռե», «մի» նոտաներով արտահայտված իր սկզբնական ուղղության անկյունով վար ընթանալ: «Մի»-ի և «դո»-ի միջև երկրորդ «դադարն» է տեղի ունենում՝ հերթական խտտորում, ուղղության փոփոխություն:

Պատկեր 14

Հաջորդ օկտավա անցնելիս առավել բացահայտ խոտորում է տեղի ունենում, իսկ դրան հետևող խոտորումը այնքան ակնհայտ է, որ օկտավաների գիծը կարող է ամբողջովին շրջվել և ընթանալ սկզբնական ուղղությանը հակառակ ուղղությամբ:

Պատկեր 15

Հետագա զարգացման ժամանակ օկտավաների կամ տասանումների գիծը կարող է վերադառնալ իր սկզբնական ուղղությանը՝ ստեղծելով ամբողջական շրջագիծ:

Պատկեր 16

Այս օրենքը բացատրում է, թե ինչու մեր գործունեության մեջ մենք ուղիղ գծերի չենք հանդիպում և թե ինչու, սկսելով անել մի բան, մենք կարծես զբաղված լինենք լրիվ մեկ այլ, նույնիսկ հակադիր բանով: Այնուամենայնիվ, մենք դա չենք նկատում և շարունակում ենք մտածել, որ անում ենք հենց այն ինչ սկսել ենք անել:

Այս ամենը և շատ այլ բան կարելի է բացատրել օկտավաների օրենքի օգնությամբ, ինչպես նաև ինտերվալների դերի և նշանակության շնորհիվ, որոնք մշտապես փոխում են ուժի զարգացման ուղղությունը՝ ստիպելով դրան շարժվել կորագծով, շրջելով այն և տանելով «հակառակ ուղղությամբ», և այլն:

Իրերի նման դրություն, այն է՝ ուղղության փոփոխություն, մենք կարող ենք ամենուր դիտարկել: Որոշակի եռանդուն գործունեությունից և ուժգին զգացմունքներից կամ ճիշտ ընկալումից հետո հակազդեցություն է տեղի ունենում. աշխատանքը դառնում է տաղտկալի և հոգնեցուցիչ, հոգնածության, անտարբերության պահեր ենք վերապրում, ճիշտ մտածողության փոխարեն սկսում ենք փոխզիջումներ փնտրել, խուսափել բարդ խնդիրներից: Սակայն ընթացքը շարունակում է զարգանալ, սակայն, այժմ արդեն սկզբնական ուղղությունից տարբերվող ուղղությամբ: Աշխատանքը դառնում է մեխանիկական, զգացմունքները գնալով թուլանում են և հասնում առօրյա իրադարձությունների մակարդակին, միտքը դառնում է դոգմատիկ և բառացի: Որոշ ժամանակ ամեն բան հենց այսպես է ընթանում, այնուհետև կրկին տեղի է ունենում փոխազդեցություն, այնուհետև դադար ու կրկին շեղում: Ուժի զարգացումը կարող է շարունակվել, բայց այն աշխատանքը, որ սկսվել էր մեծ եռանդով և ոգևորվածությամբ դարձել է պարտադիր և անօգտակար ձևականություն. մի շարք օտար տարրեր են ներթափանցել մեր զգացմունքների մեջ՝ վրդովումնք, գայրույթ, թշնամանք: Միտքը պտույտներ է կատարում՝ կրկնելով այն ամենը ինչ նրան հայտնի էր, իսկ նման իրավիճակից դուրս գալը ավելի ու ավելի է բարդանում:

Նույնը տեղի է ունենում մարդկային գործունեության բոլոր բնագավառներում. գրականության, արվեստի, փիլիսոփայության, կրոնի, քաղաքականության մեջ, անհատների և ամենից առաջ հասարակական կյանքում: Մենք կնկատենք, թե ինչպես է ուժերի զարգացման գիծը փոխում իր սկզբնական ուղղությունը և որոշ ժամանակ անց շարժվում տրամագծի հակառակ ուղղությամբ՝ *պահպանելով իր նախկին անվանումը*: Պատմության ուսումնասիրությունները բացահայտել են ամենաապշեցուցիչ փաստերը, որ մեխանիկացված մարդկությունը

նկատելու որևէ ցանկություն չունի: Ուժերի զարգացման նման փոփոխությունների ամենահետաքրքիր օրինակներ թերևս կարելի է գտնել կրոնի պատմության մեջ, հատկապես՝ Քրիստոնեության, եթե անաչառ կերպով ուսումնասիրենք այն: Պատկերացրեք, թե որքան շրջադարձներ են տեղի ունեցել ուժերի զարգացման գծում, որպեսզի սեր քարոզող Ավետարանից անցնեինք ինկվիզիցիայի, կամ *էզոթերիկ* Քրիստոնեությունը ուսումնասիրող վաղ դարաշրջանի ասկետներից անցնեինք սխոլաստների, որոնք հաշվում էին, թե քանի հրեշտակ կարելի է տեղավորել մեկ ասեղի ծայրին:

Օկտավայի օրենքը մեր կյանքում շատ երևույթներ է բացատրում, որոնք այլապես անհասկանալի են:

Առաջինը՝ ուժերի խտտորման սկզբունքն է:

Երկրորդը՝ այն փաստն է, որ աշխարհում ոչ մի բան միևնույն տեղում չի մնում, նույնը չի մնում. ամեն ինչ շարժվում է, ամեն ինչ ընթանում է ինչ-որ ուղղությամբ, փոփոխվում է և *անխուսափելիորեն կամ զարգանում է կամ գնում դեպի ներքև*, թուլանում է կամ վատթարանում, այսինքն՝ շարժվում է օկտավայի գծով դեպի վեր կամ դեպի վար:

Եվ երրորդը՝ օկտավաների վերընթաց ու վարընթաց զարգացման մեջ տատանումները, վերելքները և անկումները շարունակական են:

Մինչ այժմ մենք հիմնականում խոսել ենք տատանումների և ընդհատումների և ուժերի խտտորման մասին: Այժմ մեզ անհրաժեշտ է հստակորեն պատկերացնել հետևյալ սկզբունքները. ուժերի զարգացման յուրաքանչյուր գծում աճը կամ նվազումը անխուսափելի են, առկա են պարբերական տեղաշարժեր, այսինքն՝ յուրաքանչյուր գծում, թե բարձրացող, թե նվազող, նկատվում են վերելքներ և անկումներ:

Ոչինչ չի կարող զարգանալ՝ միևնույն մակարդակում մնալով: Վերընթաց և վարընթաց շարժումը անխուսափելիորեն ցանկացած գործողության տիեզերական պայմանն է: Մենք ոչ հասկանում ենք, ոչ էլ տեսնում ենք, թե ինչ է տեղի ունենում մեր շուրջը և մեր ներսում. պատճառն այն է, որ մենք չենք ընդունում անկման անխուսափելիությունը, երբ չկա վերելք, կամ շփոթում ենք անկումը վերելքի հետ: Մեր ինքնախաբեության հիմքում ընկած է երկու պատճառ: Մենք չենք տեսնում առաջինը, քանի որ անընդհատ հավատում ենք, որ իրադրությունը երկար ժամանակ կարող է միևնույն մակարդակում մնալ. և չենք տեսնում երկրորդը, քանի որ *վերելքները*, ինչպես մենք ենք պատկերացնում դրանք, իրականում անհնար են, ինչպես անհնար է մեծացնել գիտակցությունը մեխանիկական միջոցներով:

Սովորելով տարբերակել աճող և նվազող օկտավաները կյանքում՝ մենք պետք է սովորենք օկտավաների ներսում տարբերակել վերելքը և անկումը: Մեր կյանքի որ ասպարեզն էլ, որ վերցնենք, կտեսնենք, որ որևէ բան չի կարող մնալ հարթ և հարատև. ամենուրեք և ամենինչում առկա է ճոճանիվի շարժումը, ամենուր և ամենինչում ալիքները բարձրանում և իջնում են: Մեր էներգիան, որն ընթանում է այս կամ այն ուղղությամբ և հանկարծակի աճում է ու հանկարծակի նվազում, մեր տրամադրությունը, որ «բարձրանում է» կամ «նվազում» առանց որևէ տեսանելի պատրվակի, մեր զգացմունքները, ցանկությունները, մտադրությունները, որոշումները ժամանակ առ ժամանակ վերելքի և անկման շրջաններով են անցնում, ուժգնանում և թուլանում են:

Եվ մարդու ներսում թերևս հարյուրավոր ճոճանիվներ են շարժվում այսկողմ ու այնկողմ: Այս վերելքները և անկումները, տրամադրության, զգացմունքների, էներգիայի, վճռականության ալիքաձև տատանումները օկտավաների «ինտերվալների» միջև ուժերի զարգացման ժամանակահատվածներն են, ինչպես նաև հենց իրենք «ինտերվալները»:

Դրսևորվելով երեք հիմնական ձևով՝ օկտավայի օրենքը թելադրում է ինչպես հոգեկան բնույթի, այնպես էլ մեր կյանքի հետ կապված շատ երևույթներ: Օկտավաների օրենքից է կախված ցանկացած բնագավառում մեր գիտելիքների թերացումը և մասնատվածությունը, որի գլխավոր պատճառն այն է, որ միշտ սկսում ենք աշխատել մեկ ուղղությամբ, այնուհետև, չնկատելով, փոխում ենք ուղղությունը:

Ինչպես արդեն ասվել է օկտավաների օրենքը բոլոր իր դրսևորումներով հայտնի էր հնագույն գիտությանը:

Նույնիսկ ժամանակի բաժանումը, այսինքն շաբաթվա օրերը աշխատանքային օրերի և կիրակիների կապված է համընդհանուր օրենքներով պայմանավորված մեր գործունեության հատկությունների և պայմանների հետ: Բիրլիական առասպելը, ըստ որի աշխարհը ստեղծվել է վեց օրում, իսկ յոթերորդ օրն Աստված հանգիստացել է, նույնպես արտահայտում կամ մատնանշում է օկտավաների օրենքը, որը սակայն թերի է:

Օկտավաների օրենքի ընկալման վրա հիմնված դիտարկումները ցույց են տալիս, որ «տատանումները» կարող են տարբեր ուղղություններով զարգանալ: Ընդհատված օկտավաներում դրանք պարզապես սկիզբ են առնում, անկման ենթարկվում, սուզվում են կամ կլանվում ավելի ուժգին տատանումների կողմից, որոնք խաչվում են նրանց հետ կամ ընթանում հակառակ ուղղությամբ: Այն օկտավաներում, որոնք շեղվում են իրենց սկզբնական ուղղությունից, տատանումները փոխում են իրենց բնույթը և տալիս են նախապես ակնկալվող արդյունքներին հակառակ արդյունքներ: Եվ միայն տիեզերական համակարգի վերընթաց և վարընթաց օկտավաներում են տատանումները զարգանում հաջորդական և կանոնավոր կերպով՝ շարունակելով ընթանալ այն նույն ուղղությամբ, որով սկսել էին շարժվել:

Հետագա դիտարկումները ցույց են տալիս, որ օկտավաների ճշգրիտ և հետևողական զարգացումը, չնայած՝ հազվադեպ, կարելի է գտնել կյանքի բոլոր պարագաներում, ինչպես նաև բնության գործունեության մեջ և նույնիսկ մարդկային գործունեության մեջ:

Օկտավաների ճշգրիտ զարգացումը հիմնված է թվացյալ *պատահարների* վրա: Երբեմն պատահում է, որ տվյալ օկտավային զուգահեռ ընթացող այլ օկտավաներ՝ հատվելով կամ հանդիպելով վերջինիս հետ, այս կամ այլ կերպ, *լրացնում են նրա «ինտերվալները»* և տվյալ օկտավայի տատանումներին ազատ և անխոչընդոտ զարգացման հնարավորություն են տալիս: Օկտավաների նման ճշգրիտ զարգացման դիտարկումները փաստում են այն մասին, որ անհրաժեշտության դեպքում, այսինքն՝ այն պահին երբ տվյալ օկտավան անցում է «ինտերվալի» միջով, տեղի է ունենում նաև համապատասխան ուժի և բնույթի «լրացուցիչ ցնցում», այնուհետև այն շարունակում է շարժվել իր նախնական

ուղղությամբ՝ չհանդիպելով որևէ խոչընդոտի, որևէ բան չկորցնելով ու չփոխելով իր բնույթը:

Նման դեպքերում էական տարբերություն կա վերընթաց և վարընթաց օկտավաների միջև:

Վերընթաց օկտավայում առաջին ինտերվալը ընկնում է «մի»-ի և «ֆա»-ի միջև: Եթե այս պահին երևան է գալիս համապատասխան լրացուցիչ էներգիա, ապա օկտավան զարգանում է՝ չխոչընդոտելով սիին, սակայն սիի և դոյի միջև իր ճշգրիտ զարգացման համար նրան անհրաժեշտ կլինի *ավելի ուժեղ «լրացուցիչ ցնցում»*, քան «մի»-ի և «ֆա»-ի միջև, քանի որ այդ ժամանակ օկտավայի տատանումներն առավել ուժեղ ձայն կունենան. հետևաբար զարգացման մեջ խոչընդոտը հաղթահարելու համար անհրաժեշտ կլինի ավելի մեծ լարվածություն:

Վարընթաց օկտավայում, մյուս կողմից, ամենամեծ ինտերվալը տեղի է ունենում օկտավայի ամենասկզբում, անմիջապես առաջին «դո»-ից հետո, և այդ ինտերվալը լրացնելու նյութ շատ հաճախ հանդես է գալիս կամ ինքը «դո»-ն, կամ *«դո»-ից առաջացած* կողմնային տատանումները: Այդ պատճառով վերընթաց օկտավան առավել հեշտությամբ է զարգանում, քան վարընթաց օկտավան, և անցնելով «սին», այն հասնում է «ֆային»՝ չհանդիպելով խոչընդոտների: Այստեղ անհրաժեշտ է *«լրացուցիչ ցնցում»*, զգալիորեն ավելի թույլ *«ցնցում»*՝ ի տարբերություն «դո»-ի և «սի»-ի միջև առաջին ցնցմանը:

Մեծ տիեզերական օկտավայում, որը մեզ հասնում է *արարման ճառագայթի* տեսքով, մենք կարող ենք տեսնել օկտավաների առաջին ամբողջական օրենքը: Արարման ճառագայթը սկսվում է Բացարձակից: Բացարձակը *ամենն* է: Ամենը, ունենալով ամբողջական միասնություն, ամբողջական կամք և ամբողջական գիտակցություն, իր ներսում ստեղծում է աշխարհներ՝ այսպիսով սկիզբ դնելով վարընթաց համաշխարհային օկտավային: Բացարձակը այս օկտավայի «դո»-ն է: Բացարձակի ներսում ստեղծվող աշխարհները «սի»-ն են: «Դո»-ի և «սի»-ի միջև եղած «ինտերվալը» այս դեպքում լցված է *Բացարձակի կամքով*: Արարման գործընթացը սկզբնական իմպուլսային ուժի և «լրացուցիչ ցնցման» շնորհիվ հետագա զարգացում է ստանում: «Սի»-ն անցնում է «յա»-ին, որը մեզ համար մեր աստղերի աշխարհն է՝ Ծիր Կաթինը: «Լյա»-ն անցում է «սոլ»-ին՝ մեր *Արեգակին*, արեգակնային համակարգին: «Սոլ»-ը անցնում է «ֆա»-ին՝ մոլորակների աշխարհին: Եվ այստեղ՝ ամբողջական մոլորակային համակարգի և մեր Երկիր մոլորակի միջև ստեղծվում է «ինտերվալ»: Սա նշանակում է, որ Երկիր մոլորակի վրա տարբեր ազդեցություններ ունեցող մոլորակային ճառագայթումները չեն կարողանում տեղ հասնել, կամ ավելի ճիշտ՝ նրա կողմից չեն ընդունվում. Երկիր մոլորակը արտացոլում է դրանք: «Ինտերվալը» լցնելու համար արարման ճառագայթի այս պահին հատուկ սարք է ստեղծվում՝ մոլորակներից եկող ազդեցությունները ընդունելու և փոխանցելու համար: Այդ սարքը *Երկրի վրա օրգանական կյանքն* է: Օրգանական կյանքը Երկիր մոլորակին են փոխանցում բոլոր այն ազդեցությունները, որոնք նախատեսված են նրա համար՝ հնարավոր դարձնելով Երկիր մոլորակի, տիեզերական օկտավայի «մի»-ի, այնուհետև Լուսնի կամ «ռե»-ի հետագա զարգացումը և աճը. «ռե»-ին հետևում է մեկ այլ «դո»՝ *Ոչինչը*: *Ամենի* և *Ոչնչի* միջով անցնում է արարման ճառագայթը:

Ձեզ հայտնի՞ է «Սուրբ Աստված, Սուրբ Ամրակուռ և Սուրբ Անմահություն» աղոթքը: Այս աղոթքը գալիս է հնգագույն գիտելիքներից: *Սուրբ Աստվածը* Բացարձակն է կամ Ամենը: *Սուրբ Ամրակուռը* Բացարձակն է կամ Ոչինչը: *Սուրբ Անմահությունը* նշանակում է այն ինչ նրանց միջև է, այսինքն՝ արարման ճառագայթի վեց նոտաները օրգանական կյանքի հետ միասին: Բոլոր երեքը միասին կազմում են մեկ ամբողջություն: Այն գոյակից և անքակտելի Երրորդությունն է:

Մենք այժմ պետք է կանգ առնենք «լրացուցիչ ցնցումների» գաղափարի վրա, որը հնարավորություն է ընձեռում ուժերի գծին նշագծված նպատակին հասնել: Ինչպես արդեն ասել եմ, ցնցումները կարող են լինել պատահական: Պատահականությունն իսկապես շատ անորոշ բան է: Երբեմն նկատելով պատահականության կողմից հարթված ուժերի զարգացման գծերը՝ մարդիկ սկսում են ենթադրություններ անել կամ ակնկալիքներ ունենալ, ինչը նրանց մոտ *ուղղագծության* պատրանք է առաջացնում: Այսինքն՝ նա կարծում է, որ ուղիղ գծերը օրինաչափություն են, իսկ կոտրատված և ընդհատված գծերը՝ բացառություն: Սա իր հերթին նրա մոտ ստեղծում է պատրանք, որ հնարավոր է *անել*, հնարավոր է ձեռք բերել նախագծված նպատակը: Իրականում մարդը ոչինչ չի կարող անել: Եթե պատահմամբ նրա գործունեությունն արդյունք է տալիս, նույնիսկ եթե այն սկզբնական նպատակին նմանվում է միայն իր տեսքով, մարդն իրեն և ուրիշներին վստահեցնում է, որ նա ձեռք է բերել այն նպատակը, որ դրել էր իր առջև և որ ցանկացած մարդ կարող է ձեռք բերել իր նպատակը, իսկ մյուսներն էլ հավատում են նրան: Իրականում դա պատրանք է: Մարդը *կարող է* շահել պտուտախաղում: Սակայն դա կլինի պատահականություն: Նպատակի իրականացումը, որ մարդը իր առջև է դրել կյանքում կամ մարդկային գործունեության ցանկացած այլ բնագավառում, նման պատահականություն է: Միակ տարբերությունն այն է, որ պտուտախաղի ժամանակ մարդը գոնե հստակորեն գիտի՝ արդյոք պարտվել է, թե հաղթել յուրաքանչյուր փուլում, այսինքն՝ յուրաքանչյուր խաղազումարում: Սակայն իր կյանքի գործունեության ընթացքում, հատկապես այն գործունեության, որտեղ մասնակցում են շատ քանակությամբ մարդիկ և որտեղ անցնում են տարիներ նախաձեռնության պահից մինչև ձեռք բերված արդյունքները, մարդը շատ հեշտությամբ կարող է խաբել ինքն իրեն և «ձեռք բերված» արդյունքը ցանկալիի տեղ ընդունել՝ հավատալով, որ նա շահել է, երբ ընդհանուր առմամբ նա իրականում պարտվել է:

Մարդկային մեքենայի համար ամենամեծ վիրավորանքը կլիներ այն, եթե նրան ասեին, որ նա որևէ բան անել չգիտի, որևէ բանի չի կարող հասնել, որևէ նպատակ չի կարող հետապնդել և այն, որ, եթե նույնիսկ որևէ նպատակի ձգտի, ապա առաջ կբերի մեկ այլ նպատակ: Այլ կերպ չէր էլ կարող լինել: «Մարդ-մեքենան» պատահականության ձեռքում է: Նրա գործունեությունը տիեզերական կամ մեխանիկական ուժերի շնորհիվ կարող է պատահաբար հունի մեջ ընկնել և որոշ ժամանակ շարժվել այդ հունով, ինչը կստիպի նրան ենթադրել, թե որոշակի նպատակներ են իրագործվում: Մեր առջև դրված նպատակների և ստացված արդյունքների այսպիսի պատահական զուգատիպությունը կամ փոքր նպատակների ձեռքբերումը, *որը չի կարող ունենալ որևէ հետևանք*, մեխանիկական

մարդու մոտ այն համոզմունքն է ստեղծում, թե նա կարող է իրագործել ցանկացած նպատակ, կարող է «նվաճել բնությունը», կարող է «դասավորել իր ողջ կյանքը», և այլն:

Իրականում նա նման բան չի կարող անել, քանի որ նա չի կարող վերահսկել ոչ միայն իրենից դուրս գտնվող երևույթները, այլ նույնիսկ իր ներսում կատարվող գործընթացները: Սա պետք է շատ հստակորեն հասկանալ և յուրացնել: Միննույն ժամանակ անհրաժեշտ է հասկանալ, որ երևույթների վերահսկողությունը սկսվում է մեր ներքին գործընթացների վերահսկողությունից, այսինքն՝ ինզներս մեզ վերահսկելու կարողությունից:

Այն մարդը, ով չի կարող վերահսկել ինքն իրեն կամ իր ներսում տեղի ունեցող գործընթացները, ոչինչ չի կարող կառավարել:

Ինչպե՞ս կարելի է ձեռք բերել վերահսկողություն:

Մրա տեխնիկական մասը բացատրելի է օկտավաների օրենքների միջոցով: Օկտավաները կարող են հաջորդականորեն և շարունակաբար զարգանալ ցանկալի ուղղությամբ, եթե «լրացուցիչ ցնցումները» ներթափանցեն անհրաժեշտ պահերին՝ երբ տատանումները դանդաղում են: Եթե «լրացուցիչ ցնցումները» մուտք չեն գործում անհրաժեշտ պահերին, օկտավաները փոխում են իրենց ուղղությունը: Հույս դնել, թե պատահական «ցնցումները» կարող են ինքնաբերաբար ինչ-որ տեղից հայտնվել անհրաժեշտ պահին իսկապես հարցից դուրս է: Մարդուն մնում է գտնել այնպիսի գործունեությամբ զբաղվելու մի տարբերակ, որը կհամապատասխանի տվյալ իրադարձությունների մեխանիկական զծին, այլ կերպ ասած՝ «շարժվել այն ուղղությամբ, որ քամին է փչում» կամ «լողալ հոսանքի ուղղությամբ», նույնիսկ եթե այն հակասում է նրա ներքին հակումներին, համոզմունքներին, խղճին: Կա նաև համակերպվելու տարբերակը, որի դեպքում մարդն ընդունում է իր ձախողումը այն ամենում, ինչ նախաձեռնում է: Կամ նա կարող է սովորել տարորոշել «ինտերվալների» պահերը՝ ստեղծելով «լրացուցիչ ցնցումներ», այսինքն՝ սովորել իր գործունեության մեջ կիրառել տիեզերական ուժերի կողմից կիրառվող մեթոդը և անհրաժեշտ պահերին *ստեղծել «լրացուցիչ ցնցումներ»:*

Արհեստականորեն, հատուկ կերպով ստեղծված «լրացուցիչ ցնցումների» հնարավորությունը գործնական իմաստ է հաղորդում օկտավաների ուսումնասիրությանը. այս ուսմունքը պարտադիր և անհրաժեշտ է դառնում, եթե մարդը ցանկանում է թողնել պասիվ դիտորդի դերը և դադարել պարզապես հետևել այն ամենին, ինչ տեղի է ունենում իր հետ և իր շուրջը:

«Մարդ – մեքենան» ոչինչ չի կարող անել: Ամեն ինչ *պատահում է* նրա հետ և նրա շուրջը: Որևէ բան *անելու* համար անհրաժեշտ է իմանալ օկտավաների օրենքը, «ինտերվալների» պահերը և կարողանալ ստեղծել անհրաժեշտ «լրացուցիչ ցնցումներ»:

Դա հնարավոր է սովորել միայն *դպրոցում*, այսինքն՝ ճիշտ կազմակերպված դպրոցում, որը հետևում է բոլոր էզոթերիկ ավանդույթներին: Առանց դպրոցի օգնության մարդն ինքնուրույն չի կարող հասկանալ օկտավաների օրենքը, «ինտերվալների» իմաստը և «ցնցումների» ստեղծման հաջորդականությունը: Նա չի կարող հասկանալ, քանի որ դրա համար անհրաժեշտ են որոշ պայմաններ և այս պայմանները կարող են ստեղծվել միայն այն դպրոցում, *որը հիմնված կլինի հենց այս սկզբունքների վրա:*

Թե ինչպես է դպրոցը կարող հիմնվել օկտավաների օրենքի վրա կբացատրվի ճիշտ ժամանակին: Դա իր հերթին կբացատրի ձեզ *յոթի և երեքի օրենքների* միաձուլման ասպեկտներից մեկը: Մինչ այդ կարելի է ասել, որ դպրոցի դասավանդման մեջ բերվում են ինչպես վարընթաց (ստեղծագործական), այնպես էլ վերընթաց (էվոլյուցիոն) տիեզերական օկտավաների օրինակներ: Արևմտյան միտքը, որը որչինչ չգիտի ոչ օկտավաների, ոչ էլ երեքի օրենքների մասին, շփոթում է վերընթաց և վարընթաց գծերը և չի հասկանում, որ էվոլյուցիայի գիծը հակադրվում է ստեղծագործական գծին, այն է՝ այն ընթանում է հակառակ ուղղությամբ՝ կարծես, հոսանքին հակառակ:

Օկտավաների օրենքի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հիշել, որ օկտավաները միմյանց հետ հարաբերվելիս, բաժանվում են *գլխավորի* և *ստորադասի*: Գլխավոր օկտավան կարելի է համեմատել ծառի բնի հետ, որը շիվեր է արձակում, այսինքն՝ կողմնային օկտավաներ: Օկտավայի հիմնական յոթ նոտաները և երկու «ինտերվալները»՝ *նոր ուղղությունների կրողները*, բոլորը միասին կազմում են շրթայի ինը օղակ. երեք խումբ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երեք օղակներից: Գլխավոր օկտավաները որոշակի ձևով կապված են երկրորդական կամ ստորադաս օկտավաների հետ: Առաջին դասի ստորադաս օկտավաներից սկիզբ են առնում երկրորդ կարգի ստորադաս օկտավաները և այլն: Օկտավաների կառուցվածքը կարելի է համեմատել ծառի կառուցվածքի հետ: Դեպի վեր սլացող հիմնական բունը ոստյուններ է արձակում իր շուրջ բոլորը, որոնք իրենց հերթին բաժանվում են ավելի ու ավելի մանր ճյուղերի և վերջապում պատվում են տերևներով: Նույն գործընթացը առկա է նաև տերևների կառուցվածքում, երակների, եզրագծերի ձևավորման և այլնի գործում:

Բնության մեջ, ինչպես ցանկացած այլ բան, մարդու մարմինը որոշակի ամբողջություն է կազմում, որը ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ միանման հարաբերակցության մեջ է գտնվում: Օկտավայի նոտաների քանակության և «ինտերվալների» համաձայն՝ մարդկային մարմինն ունի ինը հիմնական չափում, որոնք արտահայտվում են որոշակի չափման միավորներով: Անհատների մոտ այդ միավորները մեծապես տարբերվում են, սակայն մեզ հայտնի որոշակի սահմաններում: Այս ինը հիմնական չափումները՝ կազմելով առաջին դասի ամբողջական օկտավա, շնորհիվ որոշակի համակցությունների, անցնում են ստորադաս օկտավայի չափման շրջանակ, ինչը իր հերթին առաջացնում է այլ ստորադաս օկտավաներ և այլն: Այսկերպ հնարավոր է դառնում ձեռք բերել ցանկացած անդամի կամ մարդու մարմնի մասի չափում, քանի որ դրանք որոշակի հարաբերության մեջ են գտնվում մեկը մյուսի հետ:

Օկտավաների օրենքը բնականաբար բազմաթիվ խոսակցությունների և թյուրիմածությունների տեղիք տվեց մեր խմբում: Գ.-ն մեզ բոլորիս նախագգուշացնում էր՝ խորհուրդ տալով զերծ մնալ չափազանց շատ տեսականացումից:

- Դուք պետք է հասկանաք և զգաք այդ օրենքը ձեր ներսում, - ասեց նա: - Միայն այդ դեպքում դուք կկարողանաք նկատել այն ձեզնից դուրս:

Սա իհարկե ճշմարիտ էր: Սակայն դժվարությունը միայն դրանում չի կայանում: Օկտավաների օրենքի սուկ «տեխնիկական» ընկալումը երկար ժամանակ է պահանջում: Եվ մենք անընդմեջ անդրադառնում էինք դրան, երբեմն անսպասելի բացահայտումներ անում, երբեմն էլ կորցնում այն ամենն ինչ, կարծես, արդեն ձեռք էինք բերել:

Այժմ դժվար է ասել, թե տարբեր ժամանակաշրջաններում այս կամ այն գաղափարը մեր աշխատանքում ինչ կենտրոնական դիրք էր զբաղեցրել՝ արժանանալով մեր ուշադրությանը և տեղիք տալով բազմաթիվ քննարկումների: Օկտավաների օրենքի գաղափարը, սակայն, մշտապես ծանրության կենտրոնում էր: Մենք ամեն անգամ անդրադառնում էինք այդ գաղափարին, խոսում դրա մասին, յուրաքանչյուր հանդիպմանը քննարկում դրա տարբեր ասպեկտները. դա արեցինք այնքան ժամանակ, մինչև որ սկսեցինք աստիճանաբար ամեն ինչ ընկալել այդ գաղափարի տեսանկյունից:

Իր առաջին գրույցի ժամանակ Գ.-ն մեզ տվեց գաղափարի միայն ընդհանուր պատկերը և պարբերաբար անդրադառնալով դրան՝ նա ցույց տվեց մեզ դրա բոլոր կողմերը և նշանակությունը:

Հետագա հանդիպումներից մեկում նա մեզ համար պատկերեց օկտավաների օրենքը՝ առաջ մղելով իրերի խորքը ներթափանցող մեկ այլ իմաստ:

- Օկտավաների օրենքն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է պարզ պատկերացում ունենալ տատանումների մեկ այլ հատկության՝ «ներքին տատանումների» վերաբերյալ: Սա նշանակում է, որ տատանումների ներսում կան այլ տատանումներ, և որ յուրաքանչյուր օկտավա կարելի է տրոհել ավելի մեծ քանակության ներքին օկտավաների:

Ցանկացած օկտավայի յուրաքանչյուր նոտա կարելի է համարել այլ մակարդակի վրա գտնվող մեկ ուրիշ օկտավա:

Այս ներքին օկտավաների յուրաքանչյուր նոտա կրկին պարունակում է մեկ ամբողջական օկտավա, սակայն այս գործընթացը անվերջ չէ, քանի որ օկտավաների զարգացումը սահմանափակ է:

Պատկեր 17

Այս ներքին տատանումները զուգահեռաբար ընթանում են տարբեր խտություն ունեցող «միջավայրերում»՝ ներթափանցելով մեկը մյուսի մեջ: Նրանք արտացոլվում են մեկը մյուսի մեջ՝ սկիզբ դնելով, ընդհատելով, առաջ տանելով կամ փոփոխելով մեկը մյուսին:

Եկեք պատկերացնենք տատանումների առկայությունը որոշակի խտություն ունեցող նյութեղենում կամ միջավայրում: Պատկերացնենք, որ տվյալ նյութեղենը կամ միջավայրը բաղկացած է աշխարհի 48-ի համեմատաբար կուպիտատումներից, այլ կերպ ասած՝ քառասունութ նախասկզբնական ատոմներից: Այս միջավայրում տեղի ունեցող տատանումները բաժանելի են օկտավաների, իսկ օկտավաներն էլ բաժանելի են նոտաների: Որոշակի հետազոտությունների նպատակով տատանումներից վերցնրել ենք մեկ օկտավա: Մենք պետք է գիտակցենք, որ այս օկտավայի սահմաններում տեղի են ունենում առավել նուրբ նյութեղենի տատանումներ: Աշխարհի 48-ի նյութեղենը հազեցված է աշխարհի 24-ի նյութեղենով:

Աշխարհ 24-ի նյութեղենը որոշակի հարաբերության մեջ է գտնվում աշխարհ 48-ի նյութեղենի տատանումների հետ, այն է՝ աշխարհ 48-ի տատանումների յուրաքանչյուր նոտա պարունակում է աշխարհ 24-ի նյութեղենի տատանումների ամբողջական օկտավա:

Մրանք *ներքին* օկտավաներն են:

Աշխարհ 24-ի նյութեղենը, իր հերթին, հագեցված է աշխարհ 12-ի նյութեղենով: Այս նյութեղենում նույնպես առկա են տատանումներ, և աշխարհ 24-ի տատանումների յուրաքանչյուր նոտա պարունակում է աշխարհ 12-ի տատանումների ամբողջական օկտավա: Աշխարհ 12-ի նյութեղեն է ներթափանցում աշխարհ 6-ի նյութեղենը: Աշխարհ 6-ի նյութեղեն է ներթափանցում աշխարհ 3-ի նյութեղենը: Աշխարհ 3 է ներթափանցում աշխարհ 1-ը: Այս աշխարհներից յուրաքանչյուրում գոյություն ունեն համապատասխան տատանումներ և հերթականությունը միշտ նույնն է մնում, այսինքն՝ առավել կոպիտ նյութեղենի տատանումների յուրաքանչյուր նոտա պարունակում է առավել նուրբ նյութի ամբողջական օկտավայի տատանումներ:

Եթե սկսենք աշխարհ 48-ի տատանումներից, ապա կարող ենք ասել, որ այս աշխարհի տատանումների մեկ նոտան պարունակում է մոլորակային աշխարհի տատանումների մեկ օկտավա կամ յոթ նոտա: Մոլորակների աշխարհի տատանումների յուրաքանչյուր նոտա պարունակում է Արեգակնային աշխարհի յոթ նոտաների տատանումներ: Արեգակնային աշխարհի յուրաքանչյուր տատանում կպարունակի Աստեղային աշխարհի տատանումների յոթ նոտա և այսպես շարունակ:

Ներքին օկտավաների ուսումնասիրությունը, արտաքին օկտավաների հետ ներքին օկտավաների հարաբերությունների ուսումնասիրությունը, առաջինի հնարավոր ազդեցությունը վերջինիս վրա աշխարհի ուսումնասիրության շատ կարևոր մասն են կազմում:

Հաջորդ հանդիպման ժամանակ Գ.-ն կրկին խոսեց արարման ճառագայթի մասին՝ մասամբ կրկնելով, մասամբ էլ լրացնելով և զարգացնելով այն, ինչ արդեն ասել էր:

- Արարման ճառագայթը, ինչպես ցանկացած այլ գործընթաց, որը տվյալ պահին ամբողջական է, կարելի է օկտավա համարել: Այն կլինի վարըթաց օկտավա, որտեղ «դո»-ից հետո գալիս է «սի»-ն, «սի»-ից հետո գալիս է «լա»-ն և այլն:

Բացարձակը կամ *Ամենը* (աշխարհ 1) «դո»-ն է, բոլոր աշխարհները (աշխարհ 3)՝ «սի»-ն, բոլոր արեգակները (աշխարհ 6)՝ «լա»-ն, մեր Արեգակը (աշխարհ 12)՝ «սոլ»-ը, բոլոր մոլորակները (աշխարհ 24)՝ «ֆա»-ն, Երկիր մոլորակը (աշխարհ 48)՝ «մի»-ն, Լուսինը (աշխարհ 96)՝ «ռե»-ն: Արարման ճառագայթը սկսվում է Բացարձակից: *Բացարձակը «Ամենն է»*: Այն «դո»-ն է:

Արարման ճառագայթը ավարտվում է Լուսնով: Լուսնից այն կողմ *ռչիւնչ* չկա: Սա նույնպես Բացարձակն է «դո»-ն:

Ուսումնասիրելով արարման ճառագայթը կամ տիեզերական օկտավան՝ մենք կտեսնենք, որ այս օկտավաների զարգացման ընթացքում «ինտերվալներ» են առաջանում. առաջինը՝ «դո»-ի և «սի»-ի միջև, այսինքն՝ աշխարհ 1-ի և աշխարհ 3-ի միջև, Բացարձակի և «բոլոր աշխարհների» միջև, և երկրորդը՝ «ֆա»-ի և «մի»-ի միջև,

այսինքն՝ աշխարհի 24-ի և աշխարհի 48-ի միջև, «բոլոր մոլորակների» և Երկիր մոլորակի միջև: Սակայն առաջին «ինտերվալը» լի է Բացարձակի կամքով: Բացարձակի կամքի դրսևորումներից մեկը այս «ինտերվալի» լրացումն է՝ չեզոքացնող ուժի գիտակից դրսևորման միջոցով, որը լրացնում է ակտիվ և պասիվ ուժերի միջև եղած «ինտերվալը»: Երկրորդ «ինտերվալի» դեպքում իրավիճակն առավել բարդ է: Մոլորակների և Երկրագնդի միջև ինչ-որ բան բացակայում է: Մոլորակային ազդեցությունները չեն կարողանում հաջորդական և ամբողջական ձևով ներթափանցել Երկիր մոլորակ: «Լրացուցիչ ցնցում» է անհրաժեշտ. ուժերի համապատասխան անցումն ապահովելու համար անհրաժեշտ է նոր պայմաններ ստեղծել:

Պատկեր 18

Մոլորակների և Երկրագնդի միջև ուժերի անցումը ապահովելու համար մեխանիկական հնարքի միջոցով ստեղծվում են հատուկ պայամաններ: Այս մեխանիկական հնարքը՝ «ուժերի հաղորդակայանը», *Երկրագնդի օրգանական կյանքն է*: Երկրի վրա օրգանական կյանքը ստեղծվել է՝ մոլորակների և Երկրի միջև եղած ինտերվալը լրացնելու համար:

Օրգանական կյանքը, այսպես կոչված, *Երկրագնդի զգայական ընկալման օրգանն է*: Օրգանական կյանքը կարծես նուրբ ժապավեն լինի, որով պատված է ողջ երկրագունդը. այն ընդունում է մոլորակային մթնոլորտից եկող ազդեցությունները, որոնք այլապես տեղ չէին հասնի: Բուսականությունը, կենդանիները և մարդու թագավորությունը, այս տեսանկյունից, հավասարապես կարևոր են Երկրի համար: Մոսկ խոտով ծածկված դաշտը որոշակի ազդեցություններ է կրում, իսկ այնուհետև փոխանցում Երկիր մոլորակին: Մարդկանցով լի միևնույն դաշտը կընդունի և կփոխանցի այլ ազդեցություններ: Եվրոպայի բնակչությունը մի տեսակի մոլորակային ազդեցություններ է կլանում և փոխանցում դրանք Երկրագնդին, Աֆրիկայի բնակչությունը՝ մեկ այլ տեսակի:

Մարդկային զանգվածների կյանքում տեղի ունեցող բոլոր խոշոր իրադարձությունները մոլորակային ազդեցությունների արդյունք են: Դրանք մոլորակային ազդեցությունների կլանման արդյունք են: Մոլորակային ազդեցությունները կրելու տեսանկյունից մարդկանց հասարակությունը չափազանց զգայուն զանգված է: Եվ մոլորակային մթնոլորտում ցանկացած պատահական փոքր լարում տարիներ շարունակ կարող է իր արտացոլումը առավել մեծ եռանդով գտնել մարդկային գործունեության այս կամ այն ոլորտում: Պատահական և կարճատև ինչ-որ մի բան տիեզերական տարածության մեջ և դա անմիջապես ներազդում է մարդկանց վրա. մարդիկ սկսում են ատել և սպանել միմյանց՝ արդարացնելով իրենց գործողությունները եղբայրության, հավասարության, սիրո կամ արդարության տեսությամբ:

Օրգանական կյանքը Երկրագնդի զգայական ընկալման օրգանն է և, միևնույն ժամանակ, այն ճառագայթման օրգան է: Օրգանական կյանքի շնորհիվ Երկրագնդի մակերեսի յուրաքանչյուր հատված, ծածկելով տվյալ տարածքը, ամեն վայրկյան որոշ տեսակի ճառագայթներ է արձակում Արեգակի, մոլորակների և Լուսնի ուղղությամբ: Այս կապակցությամբ Արևին հարկավոր է մի տեսակի ճառագայթում,

մուլորակներին՝ մեկ այլ տեսակի, իսկ Լուսնին՝ մի ուրիշ տեսակի: Այն ամենն ինչ տեղի է ունենում Երկիր մուլորակի վրա նմանատիպ ճառագայթում է առաջացնում: Եվ շատ բաներ հաճախ *տեղի են ունենում*, քանի որ որոշակի ճառագայթում է հարկավոր Երկրագնդի մակերեսի որոշակի մասից:

Մրա մասին խոսելիս՝ Գ.-ն մեր ուշադրությունը սևեռեց հատկապես ժամանակի անհամապատասխանությանը, այն է՝ մուլորակային աշխարհում և մարդկային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների տևողությանը: Ինձ համար շատ ավելի ուշ պարզ դարձավ, թե ինչու էր Գ.-ն այդքան համառությամբ կարևորում այս կետը:

Միևնույն ժամանակ նա շարունակ շեշտում էր, որ ինչ էլ, որ տեղի է ունենում օրգանական կյանքի բարակ ժապավենում, այն միշտ ծառայում է Երկրագնդին, Արևին, մուլորակներին և Լուսնին. ավելորդ և անկախ ոչ մի բան չէր կարող տեղի ունենալ այնտեղ, քանի որ օրգանական կյանքը հստակ նպատակներով էր ստեղծվել և սուկ երկրորդական բնույթ էր կրում:

Մի անգամ, շոշափելով այս թեման, նա մեզ օկտավայի կառուցվածքի մի գծապատկեր տվեց, որտեղ օղակներից մեկը «Երկրի վրա օրգանական կյանքն էր»:

- Այս լրացուցիչ կամ կողմնային օկտավան արարման ճառագայթում սկսվում է Արևից, - ասեց նա:

Արևը՝ տիեզերական օկտավայի «սուլ»-ը որոշակի պահի սկսում է «դո»-ի պես հնչել՝ «սուլ» - «դո»:

Անհրաժեշտ է գիտակցել, որ ցանկացած օկտավայի յուրաքանչյուր նոտա, տվյալ դեպքում՝ տիեզերական օկտավայի ցանկացած նոտա, կարող է ներկայացնել դրանից սկիզբ առնով մեկ այլ կողմնային օկտավայի «դո»: Կամ ավելի ճիշտ կլիներ ասել, որ ցանկացած օկտավայի ցանկացած նոտա միևնույն ժամանակ կարող է լինել դրա միջով անցնող ցանկացած այլ օկտավայի ցանկացած նոտա:

Տվյալ դեպքում՝ «սուլ»-ը սկսում է «դո»-ի պես հնչել: Ընթանալով դեպի ներքև և հասնելով մուլորակների մակարդակին՝ այս նոր օկտավան անցնում է «սի»-ի:

Ավելի ներքև իջնելով՝ այն առաջացնում է երեք նոտա, «լյա», «սուլ», «ֆա», որոնք ստեղծում և կազմում են Երկիր մուլորակի օրգանական կյանքը, այնպես, ինչպես մենք

p.139

տեսնում ենք այն: Այս օկտավայի «մի»-ն միախառնվում է տիեզերական օկտավայի «մի»-ի հետ, այսինքն՝ *Երկրագնդի հետ*, իսկ «ռե»-ն տիեզերական օկտավայի «ռե»-ի հետ, այն է՝ *Լուսնի* հետ:

Մենք անմիջապես զգացինք, որ այս կողմնային օկտավան մեծ նշանակություն ուներ: Առաջին հերթին՝ այն ցույց տվեց, որ օրգանական կյանքը, որը գծապատկերում ներկայացված էր երեք նոտաների տեսքով, ուներ երկու ավելի բարձր նոտա՝ մեկը մուլորակների մակարդակով, մյուսը՝ Արևի մակարդակով, որ այն *սկսվում էր Արևից*: Վերջին կետը ամենակարևորն էր, քանի որ կրկին, ինչպես Գ.-ի համակարգի շատ այլ փաստեր, այն հակասում էր կյանքի առաջացման վերաբերյալ համընդհանուր արդի գաղափարներին, ըստ որի կյանքը *ներքևից* է սկիզբ առել: Այս բացատրության մեջ կյանքը սկիզբ էր առնում վերևից:

Շատ քննարկումներ առաջացան կողմնային օկտավայի «մի» և «ռե» նոտաների շուրջ: Մենք իհարկե չէինք կարողանում սահմանել «ռե»-ն: Բայց այն ակնհայտորեն կապված էր Լուսնի սննդի գաղափարի հետ: Օրգանական կյանքի քայքայված մի մաս անցնում է Լուսնին. սա պետք է, որ լիներ «ռե»-ն: «Մի»-ի մասին կարելի էր շատ որոշակիորեն խոսել: Օրգանական կյանքն անկասկած անհետանում էր Երկիր մոլորակի մեջ: Օրգանական կյանքի դերը Երկրագնդի մակերեսի կառուցվածքում անվիճելի է: Հայտնի են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են մարջանների կղզիների և կրաքարային լեռների առաջացումը, ածխի հանքաշերտերի կազմավորումը և նավթի կուտակումը, բուսականության ազդեցության ներքո հողի կազմափոխությունը, լճերում բուսականության աճը, «որդերի կողմից հարուստ վարելահողի առաջացումը», ճահիճների չորացման և անտառների ոչնչացման հետևանքով կլիմայի փոփոխությունը և շատ այլ երևույթներ, որոնց մասին մենք գիտենք և որոնց մասին չգիտենք:

Սակայն սրանից բացի՝ կողմնային օկտավան առանձնահատուկ հստակությամբ ցույց տվեց, թե որքան հեշտությամբ և ճշգրտությամբ էր ամեն ինչ դասակարգված այն համակարգում, որը մենք էին ուսումնասիրում: Ամեն արտառոց, անսպասելի և պատահական երևույթ անհետանում էր և փոխարենը երևան էր գալիս մի հսկա և լավ մտածված տիեզերքի ծրագիր: